4 Ո՞վ Զամախեցի անցաւոր Հայ մարդ,
Արի, եկ, լսիր իմ ցաւերս բարդ,
Գնա, ու պատմէ եղբարցդ Հարազատ,
Սա՛, ինձ յիշեն, չլինին ապերախտ,
Մայրատեաց անբախտ։

5 Սա՛, այրուոյ պէս՝ ես տխուր նստած,
Ողբում եմ որդիքս ինձնից հեռացած,
Աղօթք, պաղատանքս է միշտ առ Աստուած,
Իմ որդւոցս տալ, առ իս վերադարձ։
Եւ մնալ անդարձ։

6 Այսպէս աւանդեց, Մէյսարու վանքը,
Իւր վերջին կտակն ու պաղատանքը,
Ուրեմն Հայ մարդ՝ ցոյց քո բաղձանքը,
Լինել ծնողասէր, վայելել փառքը։
Խոստացած կեանքը։

Թարգման սուրբ Աստուածածնի վանից Մէյսարու 1890 թվ.
Մ. Ե. Ս.

Մէյսարու վանքը նախապատիւ լինելով Զամախայ թեմի մէջ ըստ աւանդութեան՝ Սաղիանի վանքի վանահարց ցուցակի մէջ յիշեալ եպիսկոպոսաց և վարդապետաց մեծ մասն համարվում են Մէյսարու վանքի վանահայր, ինչպէս երևում է և արձանագրերից և տապանագրերից[1])։

Արձանագրերից և աւանդութիւնից երևում է, որ Մէյսարու վանքը նշանաւոր միաբաններով հարուստ լինելով՝ նախապատիւ է եղել գաւառումն և համբաւաւոր. որոյ միաբաններից է և Յակոբ Կաթուղիկոսը Զամախեցի, թուին 1759, որոյ համար մի ձեռագիր Աւետարանի յիշատակագիր գրում է թէ «Յակոբ Աստուածաբան վարդապետն՝ որ եղեւ Կաթուղիկոս, էր

[1]) Աբրահամ Կաթուղիկոս Կրետացին իւր պատմութեան մէջ՝ գլուխ ԽԲ. յիշէ Իսրայէլ վարդապետ Մէյսարու վանից՝ որ պաշար է տալել Կաթուղիկոսին Մուղանու դաշտը։